

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ «Նկարիչ վարպետ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 0515 «Նկարիչ վարպետ» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 0515 «Նկարիչ վարպետ» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքը(ները)

- 1) Խեցեգործական իրերի գեղարվեստական ձևավորում
- 2) Կտորի և տարբեր նյութերի վրա գեղարվեստական տրաֆարետային տպագրություն (շելկոգրաֆիա)
- 3) Որմնանկար (ինտերյեր, էքստերյեր)-գրաֆիտի
- 4) Նկարագարդումներ մետաղի, փայտի, ապակու, պլաստիկ նյութերի վրա
- 5) Համակարգչային գրաֆիկական դիզայներ
- 6) Քանդակագործական ստեղծագործությունների ձուլող վարպետ
- 7) Գորգերի, կարպետների և այլ գոծվածքների նախշերի գծագրում և իրականացում

7. Միջին մասնագիտական կրթության 0515 «Նկարիչ վարպետ» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

- 1) տիրապետել մասնագիտական ընդհանուր հիմնական տեսակներին, որոնք համապատասխանում են իր մասնագիտական գործունեությանը:
- 2) Ստեղծագործական եւ կատարողական գործունեություն:
- 3) Պատկերել մարդուն և նրան շրջապատող առարկայական միջավայրը ակադեմիական նկարչության և գեղանկարչության միջոցով .
- 4) Դեկորատիվ կիրառական արվեստին համապատասխան ստեղծված նմուշը տեղադրել գեղարվեստական գրաֆիկական նախագիծում և հետո իրականացնել համապատասխան նյութերով:
- 5) Հավաքել, վերլուծել և սիստեմավորել նախագծին համապատասխան նյութերը ստեղծագործական աշխատանքը իրականացնելու համար:
- 6) Կատարել էսքիզներ եւ նախագծեր օգտագործելով տարբեր գրաֆիկական գործիքներ եւ մեթոդներ.

- 7) Ինքնատիպ գունային լուծումներով զարգացնել գրաֆիկական նախագծերը:
- 8) Ինքնուրույն հայտնաբերել նոր նյութեր և տեխնոլոգիաներ ստեղծագործական և կատարողական մտահաղացումներն իրականացնելու համար:
- 9) Պատճենահանել ավանդական դեկորատիվ կիրառական արվեստի ստեղծագործություններ:
- 10) Տիրապետել արտադրական նյութերի օգտագործման տեխնոլոգիաներին
- 11) Կիրառել համակարգչային տեխնոլոգիաներ արվեստի ստեղծագործությունների մտահաղացումները իրականացնելիս:
- 12) Կիրառել նոր տեխնոլոգիաներ և գունային լուծումներ դեկորատիվ կիրառական ժող.արհեստի առարկաների համար:
- 13) Տիրապետել սեփական մշակույթի խոսքի և գրավոր, մասնագիտական տերմինաբանությունը.
- 14) Տիրապետել համաշխարհային դեկորատիվ-արվեստի և սեփական մշակույթի պատմությանը:
- 15) Տիրապետել համաշխարհային և սեփական օրնամենտի պատմությանը, տարբերել նշանները և խորհրդանիշները:
- 16) Տիրապետել անվտանգության կանոններին արտադրական լաբորատորիաներում և նյութերի օգտագործման պրոցեսում:

Միջին մասնագիտական կրթության 0515 «Նկարիչ վարպետ» (ըստ ճյուղերի) մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների և արվեստանոցների:

Դրանց հազեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1. Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝
 - ա. համակարգչային կաբինետ
 - բ. դեկորատիվ արվեստի պատմության
2. Ուսումնական լաբորատորիաների, արվեստանոցների և արհեստանոցների երաշխավորվող ցանկը՝
 - ա. խեցեգործության լաբորատորիա,

- բ. գունատեսության և կոմպոզիցիայի հիմունքների
- գ. գունանկարի
- դ. գծանկարի
- ե. քանդակագործության
- զ. գորգագործության արհեստանոց
- է .տպագրական լաբորատորիա

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0515 «Զարդակիրառական արվեստ» մասնագիտության «նկարչ-վարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

Միջին մասնագիտական կրթության 0515 «Նկարիչ վարպետ» (ըստ ճյուղերի) մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԾԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ»		
1.	Մոդուլի դասիչը	
	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ներկայացնել գծանկարը որպես կերպարվեստի բոլոր ճյուղերի հիմք:
2.	Մոդուլի տևողությունը	
	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
3.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
4.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գծանկարը որպես կերպարվեստի բոլոր ճյուղերի և մասնագիտական ուսուցման հիմք
5.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը խեցեգործության մեջ: 2) կարողանում է ներկայացնել է գծանկարի դերը գունանկարչությունում, 3) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը քանդակագործության մեջ, 4) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը

		<p>գորգագործության մեջ, 5) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը որմնանկարի մեջ, 6) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը գեղարվեստական տրաֆարետային տպագրության տարբեր նյութերի վրա, 7) կարողանում է ներկայացնել գծանկարի դերը գրաֆիկական արվեստում,</p>
6.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գծանկարի բազմաթիվ տեխնիկական և մեթոդական միջոցները, առարկայական միջավայրի և բնության ընկալման ու վերարտադրման մեթոդները
7.	Կատարման չափանիշներ	1) կարողանում է ներկայացնել գծանկարի տեխնիկական միջոցները, 2) կարողանում է ներկայացնել գծանկարի մեթոդական ձևերն ու միջոցները, 3) կարողանում է ներկայացնել առարկայական միջավայրի և բնության ընկալման ու վերարտադրման ձևերն ու սկզբունքները, 4) կարողանում է ներկայացնել բնության ընկալման ու վերարտադրման օրինաչափությունները:
8.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հանձնարարվող նկարչական աշխատանքների ընդունված չափերը, նյութերը և մատուցման ձևերը
9.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գրաֆիկական աշխատանքների կատարման ընդունված չափերը, ըստ ֆորմատների, 2) ներկայացնում է գրաֆիկայում կիրառվող նյութերն իրենց տեխնիկական հնարքներով և բազմազանությամբ, 3) ներկայացնում է կատարվող գրաֆիկական աշխատանքների մատուցման ձևերը:
10.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գծանկարի տեղադրման մեթոդները և պահանջները
11.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կիրառում գծանկարի տեղադրման մեթոդները գիպսե երկրաչափական մարմիններով նատյուրմորտում, 2) ճիշտ է կիրառում տեղադրման օրենքները նատյուրմորտի հորիզոնական և ուղղահայաց առանցքներով, 3) ճիշտ է տեղաբաշխում առաջարկված չափի մեջ նկարվող իրերի պատկերները,

		4) ճիշտ է ներկայացնում նատյուրմորտի տեղադրումը՝ հաշվի առնելով հորիզոնի գիծը:
12.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել նատյուրմորտի մասշտաբային ընկալման խնդիրը
13.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է նատյուրմորտում օգտագործվող իրերի մասշտաբային փոխհարաբերությունը, 2) ներկայացնում է նատյուրմորտի ծավալային ընկալման առանձնահատկությունը, 3) ներկայացնում է նատյուրմորտի ընկալման դաշտի կարևորությունը, 4) ներկայացնում է նատյուրմորտում կիրառվող իրերի տեղադրման փոխհարաբերությունը:
14.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել գծանկարի տեղադրման պահանջները
15.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է թղթի հորիզոնական և ուղղահայաց դիրքերում տեղադրման պահանջները, 2) ներկայացնում է տեղադրման համար անհրաժեշտ տեխնիկական ձևերը և մեթոդները, 3) ներկայացնում է նատյուրմորտի տեսողական չափման մեթոդները և կիրառվող գործիքները:
16.	Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել համաչափությունների ընկալման կարևորությունը գծանկարում
17.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է նատյուրմորտի իրերի համաչափությունների ընկալման ձևերը, 2) ներկայացնում է գիպսե դեկորատիվ հարթաքանդակի համաչափությունների ընկալման առանձնահատկությունները, 3) ներկայացնում է բարդ դեկորատիվ պատկերների հորիզոնական և ուղղահայաց առանցքային համաչափությունները, 4) ներկայացնում է պատկերների համաչափությունների փոխհարաբերությունը
17.	Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել ծավալային և հարթային պատկերների համաչափությունների գործնական կիրառման առանձնահատկությունները
18.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է երկրաչափական մարմինների համաչափությունների ընկալման սկզբունքը, 2) ներկայացնում է ծավալային իրերով նատյուրմորտի պրակտիկ պատկերման տեխնիկական հնարքները, 3) ներկայացնում է համաչափությունների կիրառման կարևորությունը հարթային պատկերներում,

		4) ներկայացնում է մարդու գլխի պատկերման համաչափությունների օրենքները, 5) ներկայացնում է մարդու մարմնի պատկերման անատոմիական համաչափությունները:
19.	Ուսումնառության արդյունք 9	Ներկայացնել ծավալային և տոնային խնդիրները գծանկարում
20.	Կատարման չափանիշներ	1) կատարում է կարճատև տոնային գծանկար ծավալային իրերով, 2) ներկայացնում է ծավալային և տոնային հիմնական խնդիրները գծանկարում, 3) ներկայացնում է տոն, կիսատոն, արտացոլում, փայլ հասկացողությունները գծանկարում, 4) ներկայացնում է ծավալային գծանկար շտրիխային տեխնիկայով, 5) ներկայացնում է ծավալային գծանկար տոնային խնդիրներով:

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ»		
21.	Մոդուլի դասիչը	
22.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գունային ընկալման և գունանկարչության մասին գործնականում կիրառելու կարողություններ:
23.	Մոդուլի տևողությունը	
24.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել «Գծանկարչության մասնագիտական գիտելիքներ», Թղթի վրա գծանկարի տեղադրման մասնագիտական պահանջները , Գծանկարում համաչափությունների ընկալման և կիրառման մեթոդները, Գծանկարի կառուցման օրենքները և մեթոդները մոդուլները:
25.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել գունանկարչության մեջ գունային ընկալման և նրա ճիշտ ընտրության ձևերը
	Կատարման չափանիշներ	1) բացատրում է գունային հարաբերության և գամայի ընտրությունը,

		2) հիմնավորում է գույների ճիշտ ընտրությունը և մատուցման ձևերը:
	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գունանկարչության հիմնական առանձնահատկությունները
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունային պատկերների ընկալման մեթոդները, 2) ներկայացնում է գունային պատկերների վերարտադրման մեթոդները:
26.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գունանկարչության հաստոցային և մոնումենտալ-դեկորատիվ ձևերը
27.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունանկարչության հաստոցային ձևերը, 2) ներկայացնում է գունանկարչության մոնումենտալ-դեկորատիվ ձևերը՝ ըստ տեսակների:
28.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գունային հագեցվածության, տոնային և ֆակտուրային, ինչպես նաև հակադրության և ընդգծվածության տեխնիկական հնարքները գունանկարում:
29.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունային հագեցվածության կարևորությունը գունանկարում, 2) ներկայացնում է տոնային և ֆակտուրային լուծումների առանձնահատկությունները գունանկարում, 3) ներկայացնում է հակադրության և ընդգծվածության կիրառման հնարքները գունանկարում:
30.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել գունանկարչության մեջ կիրառվող նյութերը և նրանց տեխնիկաները
31.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունանկարում կիրառվող նյութերը և նրանց տեխնիկաների կարևորությունը, 2) կիրառում է ջրաներկը, յուղաներկը, տեմպերան, գուաշը, ակրիլային ներկերը՝ իրենց կիրառման համապատասխան տեխնիկաներով և հնարավորություններով:
32.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել նկարչական հեռանկարչության մեթոդները և սկզբունքները գունանկարում
33.	Կատարման չափանիշներ	1) կիրառում է հեռանկարչական մեթոդներն առարկայական պատկերներում (նատյուրմորտ), 2) կիրառում է հեռանկարչական մեթոդները միջավայրային պատկերներում (բնանկար). 3) կիրառում է հեռանկարչական մեթոդները կոմպոզիցիոն աշխատանքներում:
34.	Ուսումնառության	Ներկայացնել հաստոցային գեղանկարչության ժանրերը

	արդյունք 7	
35.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) պարզաբանում է ժանրերի ֆունկցիոնալ տարբերությունները, 2) կատարում է նատյուրմորտից պրակտիկ աշխատանք՝ թղթի չափի ազատ ընտրություն, 3) կատարում է գեղանկարչական աշխատանք՝ բնանկար, կիրառելով տարածական հեռանկարի մեթոդները, 4) կատարում է պրակտիկ աշխատանք՝ օգտագործելով ճիշտ տեղադրման մեթոդները, 5) կատարում է պրակտիկ աշխատանք՝ գունանկարչությունից՝ պահպանելով կառուցման պահանջները, 6) կատարում է բնորդից գունանկարչական աշխատանք՝ հաշվի առնելով անատոմիական առանձնահատկությունները, 7) կատարում է ազատ աշխատանք կոլաժային տեխնիկայով:
36.	Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել հաստոցային գեղանկարչության պահանջները և օգտագործման նյութերը
37.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է հաստոցային գեղանկարչության մեջ տեխնիկայի, կոմպոզիցիոն, գունային, թեմատիկ նյութի ընտրության խնդիրները, 2) ներկայացնում է գունանկարում կիրառվող նյութերը և գործիքները, 3) կատարում է պարզ իրերով նատյուրմորտի առաջադրանք՝ ջրաներկով, 4) կատարում է խառը իրերով բարդ նատյուրմորտ՝ A 2 չափի վրա գուաշով, 5) կատարում է դիմանկար բնորդից՝ ակրիլ ներկերով, 6) ներկայացնում է գունանկարչության նյութերի համատեղ օգտագործման հնարավորությունները 7) ներկայացնում է գունանկարչական նյութերի կիրառման տեխնիկական բազմազանությունը:
<p>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԿԵՂՊԱՐՎԵՍՏՈՒՄ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՍԻՉՈՑՆԵՐԸ ԵՎ ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»</p>		
38.	Մոդուլի դասիչը	
39.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ գունանկարի արտահայտչամիջոցների փոփոխման, զարգացման, կոմպոզիցիոն և թեմատիկ խնդիրների

		բազմազանության մասին:
40.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
41.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել «Գունանկարչության մասնագիտական գիտելիքները» և «Գծանկարչության մասնագիտական գիտելիքները» մոդուլը:
42.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
43.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գունանկարչության արտահայտչամիջոցների և նյութի փոփոխման ժամանակային զարգացման պայմանները
44.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է արտահայտչամիջոցների տարբերակները հեղինակային աշխատանքներում, 2) կատարում է նատյուրմորտ՝ մակերեսի սպիտակ ծածկույթով կտավի վրա, 3) կատարում է բարդ նատյուրմորտ մուգ ծածկույթով կտավի վրա՝ ակտիվ ներկերով, 4) կատարում է կոմպոզիցիոն աշխատանք տարբեր գունային և տոնային ծածկույթներ ունեցող ստվարաթղթի վրա ակրիլ ներկերով, 5) կատարում է բնանկար՝ ջրաներկի համար նախատեսված հատուկ թղթի վրա, 6) կատարում է գունանկարչական առաջադրանք օգտագործելով տարբեր էֆեկտներ:
45.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնում է կոմպոզիցիոն և թեմատիկ բազմազանությունը գունանկարչությունում
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կոմպոզիցիոն խնդիրների բազմազանությունը գունանկարում, 2) կատարում է սիմետրիկ կոմպոզիցիոն լուծումով ռաջադրանք (նատյուրմորտ, որմնանկար), 3) կատարում է ծաղիկներով նատյուրմորտ՝ կիրառելով գունային շեշտադրման սկզբունքը, 4) նկարում է նատյուրմորտ խառը տեխնիկայով՝ իրականացնելով տոնային խնդիրները, 5) կատարում է բնանկար գունային շերտերի տեխնիկայի կիրառմամբ, նյութերի ազատ ընտրությամբ:
46.	Ուսումնառության	Ներկայացնել գունանկարի կատարման

	արդյունք 3	առանձնահատկությունները կերպարվեստի պատմական զարգացման հիմքով
	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ոճի, կատարման տեխնիկայի և կոմպոզիցիոն լուծումների համալիր դրվածքի կարևորությունը գունանկարչությունում,</p> <p>2) կատարում է ռեալիստական ոճով երկարատև աշխատանք,</p> <p>3) կատարում է կրկնօրինակման աշխատանք՝ ճանաչված վարպետների գործերից,</p> <p>4) ներկայացնում է առարկայական նատյուրմորտ տարբեր ոճերով՝ ռեալիստական, դեկորատիվ, արստրալիտ, սյուռռեալիստական և տարբեր ժամանակակից ոճերով:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀՈՐԻՆՎԱԾՔԻ (ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ) ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»		
	Մոդուլի դասիչը	
	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել ծավալային պատկերացման և մտածելակերպի, ինչպես նաև հորինվածքի (կոմպոզիցիոն) հիմնական հարցադրումներին, հիմնվելով հորինվածքի գործոնների ֆունկցիոնալ կիրառման և օրինաչափություններ վրա:
	Մոդուլի տևողությունը	36 ժամ
	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել «Կերպարվեստում գեղանկարչության արտահայտչամիջոցները և կոմպոզիցիոն խնդիրները» , «Գունատեսություն» մոդուլները:
	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
	Ուսումնասրության արդյունք 1	Ներկայացնել ծավալային պատկերացման և ձևաստեղծման վերլուծություն և հիմնավորում
	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է պարզ կենցաղային իրերի ֆունկցիոնալ և ծավալագոյացման վերլուծություն,</p> <p>2) ներկայացնում է հորինվածքի գործոնների համաչափությունների, ռիթմիկ դրվածքի, հակադրությունների,</p>

		ինչպես նաև մասշտաբային հիմնախնդիրների կիրառումը առարկայական միջավայրում:
Ուսումնառության արդյունք 2		Բացատրել հարթային, ծավալային և ծավալատարածական հորինվածքում գույնի կիրառման կարևորությունը
Կատարման չափանիշներ		1) բացատրում է հորինվածքի ծավալային իրականացման հնարավորությունը աբրոմատիկ (միագույն) և քրոմատիկ (բազմագույն) լուծումների տարբերակներով, 2) ներկայացնում է ծավալատարածական հորինվածքը պրակտիկ աշխատանքով:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ Խեցեգործական իրերի գեղարվեստական ձևավորում

1.	Մոդուլի դասիչը	
	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողներին ծանոթացնել և ուսուցանել խեցեգործության հիմունքներին; ձեռք բերել հիմնական գիտելիքներ կավի մշակման տեխնոլոգիաների վերաբերյալ, համաձուլվածքների ստացման մեթոդներին, չորացման, թրման տարբեր եղանակներին: Խեցեգործական իրերի գեղարվեստական ձևավորման տարբեր միջոցներին;
2.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել «Գծանկարչության մասնագիտական գիտելիքների պարզաբանում» , «Գծանկարի համաչափությունների ընկալման և կիրառման մեթոդները», «Գծանկարի կառուցման օրենքները և մեթոդները» , «Գծանկարում ծավալային և տոնային խնդիրների լուծման մեթոդները», «Հորինվածքի կոմպոզիցիայի հիմունքները դիզայնում» մոդուլները:
3.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
4.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել խեցեգործության առանձնահատկությունները, գործիքները, նյութերը և նրանց կիրառման հնարավորությունները: Խեցեգործական արտադրանքների դասակարգում: Հումքի նյութերը:
5.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է խեցեգործությունը որպես կերպարվեստի հիմնական ճյուղերից մեկը

		<p>2) ներկայացանում է խեցեգործության առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է օգտագործում խեցեգործության գործիքները և նրանց կիրառման հնարավորությունները,</p> <p>4) ճիշտ է օգտագործում խեցեգործության նյութերը և նրանց կիրառման հնարավորությունները:</p> <p>5)Տարբերում է կավի նյութերի տեսակները՝ ճենապակի,հախճապակի, քարե իրեր, մայրիկա, թրծած կավ:</p> <p>6) տարբերում է խեցու զանգվածների պատրաստման եղանակները՝ փոշենման,պլաստիկ և հեղուկ:</p>
6.	Ուսումնառության արդյունք 2	<p>1.Կավին փոխարինող նյութեր: Պլաստիքին և սիլիկատ սուսինձներ</p> <p>2.Կաղապարների տեսակներ:</p>
7.	Կատարման չափանիշներ	<p>տիրապետում է նյութերի պատրաստման և պահպանման տեխնոլոգիային:</p> <p>պատրաստում է աշխատանքներ կավին փոխարինող նյութերը՝ պլաստիքինից և սիլիկատ սուսինձների խառնուրդից</p> <p>պատրաստում է կավից և գիպսից իրական չափսերի մոդել պահպանելով տեխնոլոգիական պահանջները:</p> <p>գիպսից պատրաստում է ընդհանուր և մանր կտորների համար կաղապարներ:</p> <p>կարողանում է պատրաստել կաղապարներ Ձուլվածքի միջոցով, համաձուլվածքների միջոցով , պլաստիկ ճանապարհով, ազատ մոդելավորման բրուտագործական օղակի օգնությամբ:</p>
8.	Ուսումնառության արդյունք 1	<p>Խեցեգործական իրերի գեղարվեստական ձևավորման տարբեր միջոցներ:</p> <p>Կավի ներկերի բնութագիրը,ջնարակների տեսակները և անգորները</p> <p>Քանդակագործական մեթոդով ձևավորել թաց կավի նմուշի վրա;</p> <p>ռեյլեֆ,կոնտր-ռեյլեֆ</p> <p>Գեղանկարչական մեթոդ;</p> <p>նկարագարդումներ ջրանակի մակերեսին և ջրանակի մակերեսի տակ</p> <p>Մեխանիկական ձևավորման մեթոդներ</p>

		աերոգրաֆ, տպագրական փոխանցում, շեկոգրաֆիա, տպագրություն, շտամպ:
9.	Կատարման չափանիշներ	Ձեռքով ծեփել դեկորատիվ-կիրառական որևէ նմուշ և նկարագարդել օգտագործելով կավի պլաստիկ հատկությունները: Կիրառել քանդակագործական, գեղանկարչական և մեխանիկական ձևավորման մեթոդները: Նյութերը՝ կավի զանգված, փորագրող փայտիկներ և տեքստուրայի հատուկ գործիքներ: Ներկերը՝ ջրանակ, անգոբներ, գուաշ, ակրիլ:
10.	Ուսումնառության արդյունք 3	Չորացում, թրծում. Թրծված նմուշի նկարագարդում: 1. Իմանալ թրծման երեք եղանակներ առաջին կարգի չորացում ջնարակով թրծում դեկորատիվ 2. Իմանալ ջեռուցման երեք միջավայր օքսիդացնող վերականգնող չեզոք
11.	Կատարման չափանիշներ	1. Աշխատանքի արդյունքում ստացված դեկորատիվ-կիրառական փորագրված նմուշները ենթարկել թրծման երեք եղանակների՝ առաջին կարգի չորացման ջնարակով թրծման դեկորատիվ Նկարագարդել թրծված առարկան Ճիշտ ընտրել դեկորի տեսակը, ներկերի և ջնարակների տեսակները, կատարել գունային գամայի գրագետ ընտրություն, ձեռք բերել կերամիկական ներկերի հետ աշխատելու հմտություն: կիրառում է խեցեգործության նյութերի համատեղ օգտագործման և մասշտաբային խնդիրները: Նյութերը՝ ջնարակներ, էմալներ, ջնարակների արտաքին ներկեր:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՒՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ»		
	Մոդուլի դասիչը	
	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել նկարիչ-վարպետի գործունեության ոլորտներում

		գունատեսության վերաբերյալ կարողություններ:
	Մոդուլի տևողությունը	36 ժամ
	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել «Գունանկարչության մասնագիտական գիտելիքներ» , մոդուլը:
	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գունատեսությունը որպես գիտություն
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գունատեսությունը որպես գիտություն, 2) ներկայացնում է գունատեսության կիրառման կարևորությունը նախագծային հորինվածքներում:
	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնում է մարդու կողմից գույնի ընկալման առանձնահատկությունները
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գույնի ընկալման առանձնահատկությունները, 2) ներկայացնում է գույնը որպես գեղարվեստական արտահայտչականության ինքնատիպ միջոց, 3) ներկայացնում է գույնը որպես դիզայն նախագծային մտքի բացահայտման կարևորագույն միջոց:
	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գույնի կիրառման տեսությունը պրակտիկ նախագծային գործունեության տարբեր ոլորտներում
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գույնի հատկությունների հիմնական տեսական դրույթները, 2) ներկայացնում է գունային հորինվածքների կազմակերպման եղանակները, 3) ներկայացնում է գունային հորինվածքների կազմակերպման սկզբունքները:
	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գույնի տեսության և գույնի դասակարգման խնդիրները,
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է քրոմատիկ և աքրոմատիկ գույների համակարգերը, 2) ներկայացնում է գույնը որպես ֆիզիկական և հոգեֆիզիոլոգիական մեծություն, 3) ներկայացնում է գունային սանդղակի (սպեկտրի)

		հիմնական, լրացուցիչ, օժանդակ և հակադիր գույները:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ »		
	Մոդուլի դասիչը	
	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել քանդակագործության կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ կարողություններ:
	Մոդուլի տևողությունը	64 ժամ
	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել «Գծանկարչության մասնագիտական գիտելիքներ», «Հորինվածքի կոմպոզիցիայի հիմունքներ» մոդուլները:
	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել քանդակագործության առանձնահատկությունները, գործիքները, նյութերը և նրանց կիրառման հնարավորությունները
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է քանդակագործությունը որպես կերպարվեստի հիմնական ճյուղերից մեկը, 2) ներկայացնում է քանդակագործության առանձնահատկությունները, 3) ճիշտ է օգտագործում քանդակագործության գործիքները և նրանց կիրառման հնարավորությունները, 4) ճիշտ է օգտագործում քանդակագործության նյութերը և նրանց կիրառման հնարավորությունները:
	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել քանդակի ծավալային, տարածական ընկալման և վերարտադրման ձևերն ու մեթոդները, չափագրման և մասշտաբային ընկալման կիրառման ձևերը
	Կատարման չափանիշներ	1) կիրառում է քանդակի ծավալային, տարածական ընկալման վերարտադրման ձևերը, 2) կիրառում է քանդակի ծավալային, տարածական ընկալման վերարտադրման մեթոդները, 3) օգտագործում է չափագրման և մասշտաբային

		ընկալման կիրառման ձևերը:
	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել քանդակի տեսակները և առանձնահատկությունները
	Կատարման չափանիշներ	1) իրականացնում է հարթաքանդակի, բարձրաքանդակի և կլոր քանդակի աշխատանքներ՝ պահանջվող խնդիրների համաձայն, 2) կիրառում է ներկայացնում է ֆորմայի պատրաստման տեխնոլոգիան և մեթոդները, 3) ներկայացնում է ձուլման տեխնոլոգիան և մեթոդները, 4) պատրաստում է քանդակի կարկասային լուծումների տարբերակներ:
	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ծավալային քանդակագործության հիմնական նյութերը
	Կատարման չափանիշներ	1) օգտագործում է քանդակագործության հիմնական նյութերը փուլային աշխատանքի ընթացքում, 2) իրականացնում է քանդակագործության մեջ տարբեր նյութերի համատեղ կիրառման հնարավորությունները:
	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել փոքր պլաստիկ ծավալների, կամերային և մոնումենտալ քանդակագործության առանձնահատկությունները
	Կատարման չափանիշներ	1) իրականացնում է փոքր պլաստիկ ծավալներ իրենց առանձնահատկություններով, 2) կիրառում է կամերային քանդակագործության տեսակները, 3) ներկայացնում է մոնումենտալ քանդակագործության ինքնուրույն էսքիզային աշխատանք:
	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել քանդակագործական պրակտիկ աշխատանքի նախապատրաստման պահանջները
	Կատարման չափանիշներ	1) իրականացնում է աշխատանքի նախապատրաստական փուլը՝ տարածքով, մակերեսով, հաստոցներով և գործիքներով: 2) պատրաստում է առաջադրանքի չափերի համապատասխան տախտակ (պլանշետ), 3) մշակում է առաջադրանքի համար պահանջված նյութը՝ կավ կամ պլաստիլին, 4) նախապատրաստում է աշխատանքային հիմնական և օժանդակ գործիքները, 5) ապահովում է աշխատանքային լուսավորությունը, 6) ընտրում է դիտման դիրքը, 7) ապահովում է աշխատանքային պայմանների

		հարմարավետությունը:
	Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել քանդակային աշխատանքի կազմակերպման մեթոդական պահանջները
	Կատարման չափանիշներ	1) իրականացնում է գծանկարով կատարած էսքիզներ, 2) նախապատրաստում է կատարվող աշխատանքի համար կոնստրուկտիվ էլեմենտներ, 3) նախապատրաստում է կավ ծեծելու փայտե մուրճ կամ հարմար փայտ, 4) նախապատրաստում է կավը կամ պլաստիլինը ծածկելու պոլիէթիլեն, 5) մշակում և նախապատրաստում է որոշակի քանակությամբ կավ կամ պլաստիլին, 6) հաշվարկում է կատարվող աշխատանքի մասշտաբային հարցերը և էլեմենտների համաչափությունները:
	Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնում է քանդակագործական աշխատանքի կատարման մեթոդական ձևերը
	Կատարման չափանիշներ	1) իրականացնում է աշխատանքը մանր ծեփվածքներով, 2) իրականացնում է ծավալային լուծումները նախապատրաստված գնդաձև կավե գնդիկների միջոցով, 3) ծեփումը կատարում է ավերի մեջ պատրաստված պարանաձև երկար կավով կամ պլաստիլինով, 4) նյութի ծեփումը կատարվում է քանդակագործական գործիքներով:
		ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ներկայացնել համաշխարհային արվեստի հիմնական դարաշրջանների, գեղարվեստական ոճերի, պատմական զարգացման կարոր փուլերի հետ:
	Մոդուլի տևողությունը	36 ժամ
	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
	Ուսումնառության	Ներկայացնել համաշխարհային արվեստի պատմության

	արդյունք 1	հիմնական դարաշրջանները
	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է նախնադարյան դարաշրջանի արվեստը,</p> <p>2) ներկայացնում է անտիկ աշխարհի արվեստը՝ կերպարվեստի և ճարտարապետության ոլորտում ,</p> <p>3) ներկայացնում է միջնադարի արվեստը իր բազմազանությամբ,</p> <p>4) ներկայացնում է վերածննդի արվեստը տարբեր երկրներում (կերպարվեստ, ճարտարապետություն, թատրոն, երաժշտություն),</p> <p>5) ներկայացնում է բարոկոյի, ռոկոկոյի արվեստի զարգացումը եվրոպական երկրներում,</p> <p>6) ներկայացնում է կլասիցիզմի դարաշրջանը արվեստում, նրա պահանջները,</p> <p>7) ներկայացնում է ժամանակակից արվեստի գեղագիտական սկզբունքները և ուղղությունները,</p> <p>8) ներկայացնում է սկզբունքների ամբողջականությունը արվեստի տարբեր տեսակներում:</p>
	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել համաշխարհային ճանաչում ունեցող արվեստագետների, ընդգծելով նրանց դերը արվեստի զարգացման գործում
	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մեծ արվեստագետների, որպես հիմնադիրներ արվեստի նոր ուղղությունների,</p> <p>2) ներկայացնում է Միրոնի և Ֆիդիասի ստեղծագործական մեծ դերը հունական արվեստում,</p> <p>3) ներկայացնում է իտալական բարձր վերածննդի արվեստի երեք տիտանների՝ Լեոնարդոյին, Միքելանջելոյին և Ռաֆայելին,</p> <p>4) ներկայացնում է ֆրանսիական իմպրեսիոնիզմի և պոստիմպրեսիոնիզմի ներկայացուցիչների արվեստը՝ Մանե, Մոնե, Դեգա, Վան Գոգ, Սեզան, Գոգեն, Ռոդեն,</p> <p>5) ներկայացնում է Հոլանդիայի մեծ վարպետ Ռեմբրանդի մեծ արվեստը, որպես պորտրետային ժանրի խոշոր ներկայացուցիչ,</p> <p>6) ներկայացնում է Պիկասոյի արվեստը,</p> <p>7) ներկայացնում է Դալիի արվեստը որպես սյուրռեալիստական արվեստի վառ ներկայացուցիչ,</p>

		8) ներկայացնում է 20-րդ դարի “մոդեռն” արվեստի խոշոր ներկայացուցիչներին:
Ուսումնասիրության արդյունք 3		Ներկայացնել ռեալիստական արվեստի դերը, նշանակությունը և զարգացման առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ		1) ներկայացնում է ռեալիստական արվեստի ակունքները նախնադարի արվեստում, 2) ներկայացնում է ռեալիստական արվեստի պահանջները և խնդիրները, 3) ներկայացնում է ռեալիստական արվեստի խոշոր ներկայացուցիչներին համաշխարհային արվեստի զարգացման տարբեր փուլերում, 4) ներկայացնում է ռեալիստական արվեստի կոմպոզիցիոն պահանջները և նրա զարգացումը, 5) ներկայացնում է ռեալիստական արվեստի դերը կերպարվեստում, 6) ներկայացնում է ռեալիստական արվեստի ազգային առանձնահատկությունները:
		ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՊՐՈԵԿՑԻՈՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ>>
Մոդուլի նպատակը		Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ մասնագիտական գիտելիքներ՝ պրոեկցիոն գծագրության օրենքների մասին և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը		54 ժամ տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները		Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել <<Երկրաչափության հիմնախնդիրները>>:
Ուսումնասիրության արդյունքները		Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի պրոեկցիոն գծագրության աշխատանքային գործընթացը և կատարման եթոդները, 2) ներկայացնի տրամաբանական տարածական պատկերացման խնդիրները՝ պարզ, միջին և բարդ լուծումներով, 3) ներկայացնի պրոեկցիոն և երկրաչափական գծագրության պրակտիկ կիրառման կարևորությունը նախագծային աշխատանքներում,
Մոդուլի		Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր

	գնահատման կարգը	արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել պրոեկցիոն գծագրության աշխատանքային գործընթացը և կատարման մեթոդները:
	Կատարման չափանիշներ	1) իրականացնում է գծագրի կատարման նախապատրաստական աշխատանքներ, 2) իրականացնում է շարժական քանոնի ամրացումը, 3) պատրաստում է աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր գծագրական գործիքները, 4) կատարում է գծագրվող առարկայի չափագրում, 5) կատարում է թղթի վրա առարկայի պրոեկցիաների, իզոմետրիայի և դետալների դասավորության էսքիզային սխեման:
	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքներ կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի ժամանակ ստուգվելու են գծագրի կատարման նախապատրաստական աշխատանքները, շարժական քանոնի ամրացման ձևերը, աշխատանքի համար անհրաժեշտ գործիքների օգտագործման վերաբերյալ գիտելիքները: Իսկ գործնական առաջադրանքների ժամանակ ստուգվելու են ուսանողի՝ գծագրվող առարկայի չափագրման, թղթի վրա առարկայի պրոեկցիաների իզոմետրիայի և դետալների դասավորության էսքիզային սխեմայի կատարման վերաբերյալ կարողությունները:
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգի պլակատներ, օրինակելի գծագրեր և գծագրության պահանջներին համապատասխան լսարան:
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել տրամաբանական տարածական պատկերացման խնդիրները՝ պարզ, միջին և բարդ ու ծումներով

	Կատարման չափանիշներ	<p>1) գծագրում է գլանաձև հիմքով առարկայի պրոեկտման պարզ տրամաբանական խնդիր,</p> <p>2) գծագրում է ուղղանկյան հիմքով առարկայի միջին բարդության տրամաբանական խնդիր,</p> <p>3) գծագրում է բազմանկյան ձևով առարկայի պրոեկտման բարդ լուծումներով խնդիր:</p>
	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հաճնարարություն կատարելու հիման վրաՍովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ տրամաբանական տարածական խնդիրների լուծումների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա:</p>
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքը ձեռք է բերվում գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական մասնագիտական ձեռնարկներ և գծագրերով ցուցադրական պլակատներ, գծագրության պիտույքներ և համապատասխան կահավորված լսարան:</p>
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 14 ժամ
	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել պրոեկցիոն և երկրաչափական գծագրության պրակտիկ կիրառման կարևորությունը նախագծային աշխատանքներում:
	Կատարման չափանիշներ	<p>1) իրականացնում է պարզ իրի նախագծային գծագիր պրոեկցիաներով, կտրվածքով, տարածական տեսքով,</p> <p>2) գծագրում է նախագծի դետալների և հանգույցների գծագրեր լծորդումներով և կտրվածքներով,</p> <p>3) գծագրում է նախագծված իրի առանձին դետալների հավաքման սխեման տարածական պատկերներով,</p> <p>4) իրականացնում է իրերի գաբարիտային գծագրերը՝ գծերի տարբեր տեսակների օգտագործմամբ:</p>
	Գնահատման միջոցը	<p>Սովորողների գիտելիքները գնահատվելու նպատակով կտրվեն մի շարք առաջադրանքներ նախագծային աշխատանքներում պրոեկցիոն և երկրաչափական գծագրության պրակտիկ կիրառման կարևորության վերաբերյալ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է անսխալ:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական մասնագիտական ձեռնարկներ և գծագրերով ցուցադրական պլակատներ, գծագրության պիտույքներ և համապատասխան կահավորված լսարան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 6 ժամ գործնական աշխատանք` 16 ժամ
	ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ<<ԿԵՏՍՅԻՆ ԳՐԱՏԻԿԱ <<ADOBE PHOTOSHOP>>
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի տալ գիտելիքներ <<Adobe photoshop>> ծրագրային փաթեթի վերաբերյալ և այն պրակտիկ աշխատանքում կիրառելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ գործնական աշխատանք` 72
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ,«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ»,«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ», «ԳՈՒՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է 1) ներկայացնի գրաֆիկական ծրագրի սրբագրման գործիքները, 2) ներկայացնի նկարի գունավորման ձևերը և գունային կորերի ստացման տարբերակը, 3) ներկայացնի ծրագրի գործիքները և մենյուները, 4) ներկայացնի ծրագրային էֆեկտները և էլեմենտների մոնտաժման հնարավորությունները:
Մոդուլի զնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողական ընդլայնված յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարողակիս պահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գրաֆիկական ծրագրի սրբագրման գործիքները:
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է վնասված լուսանկարի մշակման աշխատանքային խնդիրները,

		<p>2)կատարում է լուսանկարի մշակման գործողությունները պահանջվող հաջորդականությամբ:</p> <p>3)կարգավորում է լուսանկարի պայծառությունը և կոնտրաստը,</p> <p>4) կատարում է խոշոր բիծերի վերացման աշխատանք,</p> <p>5)կատարում է գունային տոների կարգավորում հատուկ վրձնի օգնությամբ,</p> <p>6)իրականացնում է գունային շերտերի տեսանե լիության ապահովում:</p>
	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների հիման վրա:</p> <p>Ուսանողին հանձնարարվելու է կատարել գործնական առաջադրանք՝ վնասված լուսանկարի մշակման աշխատանքներ գրաֆիկական ծրագրի սրբագրման գործիքներով:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է գրագետ:</p>
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ծրագրերի ուսուցման ձեռնարկներ, համակարգիչ, պրոեկցիոն սարք, ծրագրային աշխատանքների լավագույն օրինակներ և համակարգչային դասասենյակ:</p>
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
	Ուսումնառությանարդյունք 2	Ներկայացնել նկարի գունավորման ձևերը և գունային կորերի ստացման տարբերակը
	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է լուսանկարի մոնոխրոմ պատկերը,</p> <p>2) բաժանում է լուսանկարի պատկերը առանձին էլեմենտների:</p> <p>3) կատարում է լուսանկարի էլեմենտների գունավորում նախատեսված գործիքով և մենյուով,</p> <p>4) կատարում է լուսանկարի առանձին էլեմենտների գունային փափուկ անցումներ,</p> <p>5) կատարում է մշակված լուսանկարի անջատում ֆոնից և տեղադրում այլ մակերեսի վրա:</p>
	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գործնական առաջադրանք՝ նկարի</p>

		գունավորման ձևերի գունային կորերի ստացման տարբերակով: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է գրագետ:
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ծրագրերի ուսուցման ձեռնարկներ, համակարգիչ, պրոեկցիոն սարք, ծրագրային աշխատանքների լավագույն օրինակներ և համակարգչային դասասենյակ:
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 18
	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ծրագրի գործիքները և մենյուները
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է շերտերի ընտրվածության գործիքները, 2) ներկայացնում է շերտերի գունապատման գործիքները, 3) ներկայացնում է գունային ֆիլտրերը և նրանց կիրառումը, 4) կատարում է լուսանկարի վերջնական տեսքի ապահովում ծրագրային մենյուի օգնությամբ:
	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գործնական առաջադրանք՝ օգտագործելով ծրագրի մենյուն և գործիքները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է գրագետ:
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	գործնական աշխատանք՝ 20 ժամ
	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ծրագրային էֆեկտները և էլեմենտների մոնտաժման հնարավորությունները
	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ծրագրային էֆեկտները իրենց ֆունկցիոնալ հնարավորություններով, 2) կատարում է մառախուղի էֆեկտի կիրառում բնապատկերի վրա: 3) իրականացնում է պատկերի տոնային հարաբերությունների փոփոխություն, 4) փոխում է նկարի փափկությունը, 5) ներկայացնում է մոնտաժային աշխատանքների հնարավորությունը,

		6) իրականացնում է գիշերային պատկերի ստացման մոնտաժային աշխատանք 7) ներկայացնում է հիմնական գույների ընտրման կարգը:
Գնահատման միջոցը		Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գործնական առաջադրանք՝ օգտագործելով ծրագրային էֆեկտները և էլեմենտների մոնտաժման հնարավորությունները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է անսխալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները		Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ծրագրերի ուսուցման ձեռնարկներ, համակարգիչ, պրոեկցիոն սարք, ծրագրային աշխատանքների լավագույն օրինակներ և համակարգչային դասասենյակ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը		գործնական աշխատանք՝ 22 ժամ
		ՄՈՂՈՒԼԻԱՆՎԱՆՈՒՄԸ<<ՎԵԿՏՈՐԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ COREL DRAW>>
Մոդուլինպատակը		Այս մոդուլի նպատակն է ուսանողի ծանոթացնել վեկտորային գրաֆիկայի <<Corel DRAW>> ծրագրային փաթեթին և կիրառական խնդիրների լուծման մեթոդներին:
Մոդուլի տևողությունը		72 ժամ գործնական աշխատանք՝ 72 ժամ
Մուտքային պահանջները		Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել <<Կետայինգրաֆիկա (Adobe Photoshop)>> մոդուլը:
Ուսումնասիրության արդյունքները		Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է 1) ներկայացնի գույնը, գունային մոդելները և կոնտուրները վեկտորային գրաֆիկայում, 2) ներկայացնի պարզ օբյեկտների ստեղծում և պահպանում վեկտորային գրաֆիկայում, 3) ներկայացնի բարդ օբյեկտների ստեղծումը պարզ օբյեկտների միջոցով, 4) ներկայացնի սահուն անցման և կրկնվող կոնտուրների էֆեկտները, 5) ներկայացնի շողքի ստացման և զծային հեռանկարի

		էֆեկտները
	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլը ներդրում է լիատարողական ընդլայնված կարգավարարման կարգակիսային հովանավորման:
	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գույնը, գունային մոդելները և կոնտուրները վեկտորային գրաֆիկայում,
	Կատարման չափանիշներ	1) օգտագործում է գույնը թվային տեսքով, 2) օգտագործում է հիմնական գույները և խառնուրդները, 3) օգտագործում է գունային մոդելները RGB CMYK, 4) օգտագործում է ճառագայթարձակող և արտացոլված գույները, 5) իրականացնում է գույների կարգավորում, 6) տեղադրում է վեկտորային պատկերի եզրագծային կոնտուրները, 7) օգտագործում է կոնտուր ստեղծող գործիքներ:
	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գործնական առաջադրանք վեկտորային գրաֆիկայում օգտագործելով գույնը, գունային մոդելները և կոնտուրները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է անսխալ:
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ծրագրերի ուսուցման ձեռնարկներ, համակարգիչ, պրոեկցիոն սարք, ծրագրային աշխատանքների լավագույն օրինակներ և համակարգչային դասասենյակ:
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 10 ժամ
	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել պարզ օբյեկտների ստեղծում և պահպանում վեկտորային գրաֆիկայում
	Կատարման չափանիշներ	1) դասակարգում է պարզ օբյեկտների հատկությունները, 2) կիրառում է մասնատման կամ եզրագծի ռեժիմը, 3) կիրառում է էլիպս գործիքի ռեժիմները, 4) օգտագործում է նախշերի ստացման գործիքները,

		<p>5) իրականացնում է օբյեկտի հայելաձև պատկերի ստեղծում,</p> <p>6) ստեղծում է բազմանկյուն պատկերային էլեմենտներ,</p> <p>7) կառուցում է սպիրալ տիպի պատկերներ:</p>
	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գործնական առաջադրանք վեկտորային գրաֆիկայում պարզ օբյեկտների ստեղծման և պահպանման վերաբերյալ:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրանքները կատարում է գրագետ:</p>
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ծրագրերի ուսուցման ձեռնարկներ, համակարգիչ, պրոեկցիոն սարք, ծրագրային աշխատանքների լավագույն օրինակներ և համակարգչային դասասենյակ:</p>
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել բարդ օբյեկտների ստեղծումը պարզ օբյեկտների միջոցով
	Կատարման չափանիշներ	<p>1) կիրառում է պարզ պատկերների միավորման եղանակները,</p> <p>2) իրականացնում է պարզ օբյեկտների միացումը և ընդհանուր եզրագծի ստացումը,</p> <p>3) կատարում է օբյեկտների տեղադրում իրար մեջ,</p> <p>4) կատարում է կոնտուրների փակում և արտահայտում է գունային լիցքով,</p> <p>5) ներկայացնում է պարզ օբյեկտի հատկությունների փոխանցումը նոր օբյեկտին:</p>
	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գործնական առաջադրանք պարզ օբյեկտների միջոցով ստեղծել բարդ օբյեկտներ:</p> <p>Արդյունքը համարվում է բավարար, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է անթերի:</p>
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ</p>

		<p>ծրագրերի ուսուցման ձեռնարկներ, համակարգիչ, պրոեկցիոն սարք, պարզ օբյեկտներից բարդի ստեղծման լավագույն օրինակներ և համակարգչային դասասենյակ:</p>
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել սահուն անցման և կրկնվող կոնտուրների էֆեկտները
	Կատարման չափանիշներ	<p>1) կիրառում է միջանկյալ օբյեկտների ստացման մեթոդը, 2) կատարում է սահուն անցում հիմնական օբյեկտից միջանկյալ օբյեկտ: 3) իրականացնում է միջանկյալ օբյեկտների քանակի, գույնի փոփոխություն, 4) փոխում է օբյեկտի պտտման անկյան աստիճանը,</p>
	Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին տրվող առաջադրանքների միջոցով կբացահայտվի ուսանողի կարողությունները կրկնվող կոնտուրների էֆեկտների և սահուն անցման վերաբերյալ: Արդյունքը համարվում է բավարար, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է կատարման չափանիշներին համապատասխան:</p>
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ծրագրերի ուսուցման ձեռնարկներ, համակարգիչ, պրոեկցիոն սարք, կրկնվող եզրագծերի (կոնտուրների) և հիմնական օբյեկտից միջանկյալ օբյեկտ սահուն անցման լավագույն օրինակներ և համակարգչային դասասենյակ:</p>
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 18 ժամ
	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել շողքի ստացման և գծային հեռանկարի էֆեկտները
	Կատարման չափանիշներ	<p>1) կիրառում է շողքի ստվերի արտահայտման գործիքները, 2) փոփոխում է շողքի գույնը, թափանցիկությունը, խտությունը, ուղղությունը,</p>

